

**ՓՈԽԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ  
ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Գեղարվեստական գրականության թարգմանությունը ընթերցողին տվյալ գրականությանը ծանոթացնելու միջոց է, և կարևոր է որոշակի սահմանված կաղապարների դերը, որոնք կարող են օգնել թարգմանչին բնագիրը առանց կորուստների փոխանցել թարգմանող լեզու: Ինչպես արդարացիորեն նշում է Կոպանովը, գեղարվեստական ստեղծագործությունը սահմաններ չունի և վերջինիս կերտման ընթացքում գրողն առաջնորդվում է առկա մի շարք ընդունված հնարներով և գեղարվեստական որոշակի ոճով (3, էջ 34): Ի հավելումն սրա կարելի է նկատել, որ գրողը, բացի ոճական հնարներից, պիտի լիովին տիրապետի իր մայրենի լեզվին:

Թարգմանիչը նույնպես կատարում է ստեղծագործական աշխատանք որոշակի իրականության և ժամանակի մեջ, որը շատ հաճախ կարող է տարբերվել բնագրի ստեղծման իրականությունից և ժամանակներից: Իսկ ամբողջ ստեղծագործական գործընթացը թարգմանիչը կատարում է նույնպես ելնելով թարգմանաբանության մեջ ընդունված որոշակի հնարների իմացության և գործածության սկզբունքներից:

Ա.Կ. Ֆյոդորովը բնագրի լեզուն համարում է լայն բացված դուռ թարգմանչի համար, որը քաջ տիրապետում է այդ լեզվին այն գեղարվեստական իրականության մեջ, որում գրվել է (7, էջ 139): Ելնելով լեզուների տարբերություններից առանց կորուստների թարգմանության հասնելու համար շատ կարևոր է փոխակերպական կաղապարների կիրառությունը: Չարկ է համաձայնել Լվովսկայայի այն մտքի հետ, որ թարգմանիչը նման կաղապարների մեջ պետք է տեսնի ոչ միայն պատրաստի առաջարկներ, քանի որ քարացած կանոններն այս դեպքում անհնար են, և թարգմանությունը, ինչպես և կենդանի խոսքը, միշտ ենթադրում են ստեղծագործական գործընթաց, պարզապես կարևոր է հասկանալ այդ փոխակերպումների սկզբունքը և ճիշտ կիրառել դրանք գործնականում (5, էջ 183):

Այս հայեցակետը դիտարկվել է դեռևս անտիկ ժամանակաշրջանի մտածողների աշխատություններում, երբ մեծ էր հետաքրքրությունը հունական գրականության թարգմանության նկատմամբ: Օրինակ նշվում է, որ մի լեզվից մյուսը թարգմանելիս հարկ է ոչ թե հաշվել բառերը, այլ կշռել դրանք: Այս միտքը թույլ է տալիս ենթադրելու, որ դեռ անտիկ ժամանակներում արդեն ծնավորվում է թարգմանական արվեստը, որում առկա էին փոխակերպական կաղապարների հիմքերը: Այսինքն կարևորվում էր իմաստի ճիշտ վերարտադրությունը, իսկ ավելի պակաս կարևորում էր այն փաստը, թե բնագրի մեկ բառակապակցությունը կփոխարինվի մեկ բառով, թե՞ մեկ նախադասությունը երկուսով և այլն: Այդ նույն շրջանում մեկ այլ դեպքում խորհուրդ է տրվում հրաժարվել տվյալ ժամանակաշրջանին հատուկ բառացի թարգմանությունից և թարգմանել ոչ թե բառ առ բառ, այլ ըստ իմաստի (1, էջ 23-30):

Ամտիկ մտածողների այս և նման շատ մտքեր թույլ են տալիս ենթադրելու, որ դեռևս վաղ ժամանակներում արդեն թարգմանիչը փորձում էր որոշակի փոխակերպումների դիմել հոգուտ թարգմանության:

Փոխակերպական կաղապարների կիրառությունը դեռ չի նշանակում, որ թարգմանիչը կարող է հեռանալ բնագրից և լրիվ յուրովի ներկայացնել այն հատվածը, որը դժվար է թարգմանել: Նման դեպքերում ընդունված են բացատրական թարգմանությունը, վերապատմումը, երբ թարգմանիչը իրոք որևէ սուբյեկտիվ լուծում է տալիս խնդրին, սակայն մնում է բնագրին մոտ: Այս դեպքում նույնպես թարգմանչին հարկավոր են որոշակի սահմանված չափանիշներ, որպեսզի այդ փոխակերպումներից թարգմանությունը չտուժի:

Զնայած ընդլայնում, խտացում, բացատրական և մոտավոր թարգմանություն, կրճատում, բացթողում, կոնկրետացում, ընդհանրացում և մյուս կաղապարներն արդեն ունեն իրենց տրված եզրեր և որոշակի սահմանումներ դրանք դեռ հստակ և սպառիչ չեն:

Փոխակերպական կաղապարների սահմանների ոչ հստակ լինելու մասին Ջ.Դ. Լվովսկայան գրում է և ավելացնում, որ դրանց գոյություն ունեցող դասակարգման բոլոր ձևերն էլ պայմանական են, տարբեր տիպի փոխակերպումների մեջ չկա հաստատուն պատճեշ՝ միևնույն փոխակերպումները կարող են վիճելի խնդիր դառնալ, դրանց կարելի է միևնույն ժամանակ ներառել մի քանի տարբեր խմբերում (5, էջ 183): Օրինակ Լ.Ս. Բարխուդարովը փոխակերպումները բաժանում է 4 մեծ խմբի տեղափոխություն, փոխարինում, հավելում և բացթողում (2, էջ 190): Փորձը ցույց է տալիս, որ այս ասպարեզում ավելի խոր ուսումնասիրությունները հնարավորություն կտան վերջիններիս իրենց հերթին բաժանելու ավելի փոքր խմբերի և տալ մանրամասն դասակարգում:

Ինչպես արդարացիորեն նշում է Ջ.Դ. Լվովսկայան իր «Թարգմանության տեսական խնդիրները» գրքում. «Փոխակերպական կաղապարի բացատրական կարողությունն առանձնապես մեծ չէ, քանզի այն սահմանափակվում է լեզվական իմաստների մակարդակով: Այս կաղապարը չի պատասխանում մի շարք հարցերի: Մասնավորապես անպատասխան է մնում գլխավոր հարցը, թարգմանիչը հատկապես ինչն է պարտավոր թարգմանել և ինչը կարող է նաև չթարգմանել» (5, էջ 49): Եվ եթե այդպես է, ապա կարելի է ենթադրել, որ փոխակերպական կաղապարի ձևերից մեկի խտացման խնդիրը ոչ թե վերջինիս լեզվական, այլ արտալեզվական մակարդակում է: Նույն գրքում Լվովսկայան այն տեսակետն է արտահայտում, որ հավելումներին հակադրվող այս կրճատում կաղապարի կիրառության պատճառները, որը նաև կոչվում է «խտացում», նույնպես կարող են լինել լեզվական և արտալեզվական (5, էջ 221):

Այստեղ նույնպես լեզվաբանների կարծիքները բազմազան են և հակասական: Հակասությունները վերաբերում են ինչպես ընդունված եզրերին, այնպես էլ դրանց օգտագործման պատճառներին ու ձևերի լիարժեք դասակարգմանը, սահմանմանը:

Շատ Եվեյցերի *խտացումը* կիրառվում է տեքստի ավելորդ ընդլայնումից խուսափելու նպատակով (6, էջ 189):

Եղանակի նման մեկնաբանությունը ենթադրում է ոչ այնքան կարևոր մանրամասների բացթողում: Այնուամենայնիվ, սա նույնպես խտացման արտա-

լեզվական պատճառներից մեկն է և հստակ չի պատասխանում այն հարցին, թե հատկապես որ տարրն է անհրաժեշտ խտացնել, որը ոչ: Այս սահմանումը բավականին մոտ է Կոպանովի և Բեերի մեկնաբանություններին, համաձայն որոնց բացթողումների (խտացումների) դեպքում այս կամ այն պատճառով ոչ արդիական համարվող տեղեկությունը չի թարգմանվում: Այլ կերպ ասած տեքստը խտացվում է: Այս մեկնաբանություններն ունեն տարբեր դրդապատճառներ: Եթե առաջինի դեպքում տեքստի ավելորդ ընդլայնումից խուսափելն է, որը հանգեցնում է խտացման, ապա ըստ Կոպանովի և Բեերի երբեմն կարելի է չթարգմանել մի ամբողջ հատված: Եվ ինչպես Բեերի գրքում է նշվում, այս եղանակն ավելի հաճախ հանդիպում է արևմտյան գրականությանը հատուկ չափից դուրս նատուրալիստական նկարագրությունների սիրային դրվագներում (4, էջ 212):

Վերոհիշյալ երկու մեկնաբանություններն էլ կարելի է համարել արտալեզվական, որոնք ստիպում են ենթադրելու ըստ Շվեյցերի այն տարրերը, որոնք ավելի պակաս կարևոր են, կարելի է նաև չթարգմանել և ավելորդ անգամ չծանրացնել տեքստը: Իսկ Կոպանովը և Բեերը գտնում են, որ տեքստում եղած սիրային մեկնաբանությունները նույնիսկ ավելորդ են թարգմանել: Ըստ այդմ արտալեզվական փոխակերպումները կարող են իրենց հերթին դասակարգվել որպես՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ: Սուբյեկտիվ փոխակերպումների դեպքեր կարող են համարվել Շվեյցերի, Կոպանովի և Բեերի նշածները: Օբյեկտիվ փոխակերպումներ կարելի է հանդիպել իրականությունների, եզրերի թարգմանության մեջ, երբ, օրինակ, հնարավոր չէ թարգմանել առանց անհրաժեշտ բացատրության: Արտալեզվական ընդլայնման մեկ այլ դրդապատճառի ենք հանդիպում նաև Լվովսկայայի աշխատության մեջ, որը բխում է թարգմանչի և թարգմանությունն ընթերցողի ինտելեկտուալ տարբերություններից: Այստեղ թարգմանիչը կարող է մի փոքր հուշում կատարել տեքստում ասեմբլ տվյալ անվանը (որը լավ ծանոթ է թարգմանչին, բայց ոչ ընթերցողին) ավելացնելով որևէ ածական կամ նշելով նրա մասնագիտությունը որպես հատկանիշ: Սակայն, ինչպես արդարացիորեն նշում է Լվովսկայան, այդ բացատրությունը պիտի ավելորդ անգամ չերկարացնի և չծանրաբեռնի տեքստը, այլ պարզապես հուշող ակնարկ լինի (4, էջ 218-219): Նույն գրքի հետագա գլուխներում, որտեղ Լվովսկայան առանձին փոքր ենթավերնագրերով քննարկում է փոխակերպական մի շարք կաղապարներ, հատկապես ընդգծում է դրանց լեզվական պատճառները: Վերջիններս նա տեսնում է երկու լեզուների լեզվական համակարգի և քերականական նորմերի տարբերության մեջ: Սսենք, երբ բնագրի մեկ բառին թարգմանող լեզվում համապատասխանում է բառակապակցություն, այդ դեպքում երևույթի առկայությունը, իհարկե, անվիճելի է և ակնհայտ, սակայն այստեղ կա դրա տիպերի և ոլորտի հստակ դասակարգման խնդիր:

Այսպես Նալդայի և Թեյքերի գրքում, որտեղ ընդլայնումը արտահայտված է ոչ թե Amplification այլ exantion եզրով, նշվում է, որ վերջինս կարող է, ամենայն հավանականությամբ, բաժանվել շարահյուսական կամ ձևաբանական և բառային խմբերի՝ Այստեղ, սակայն, չի նշվում ընդլայնման արտալեզվական դասակարգման մասին: Իսկ խտացումը կամ կրճատումը, որը ներկայացված

և reduction եզրով, ունի 7 տեսակ: Դրանք են կրկնակների պարզեցում, հարակրկնությունների կրճատում, նախադասության անդամների հատկորոշման բացթողում, կապերի և շաղկապների բացթողում, ամրագրված կաղապարների կրճատում, առավել ընդարձակ զխափոր անդամներով նախադասության զեղջուկներ, բազմակրկնության պարզունակացում (8, էջ 166–168):

Իսկ եթե անցում կատարենք հետազոտման բառային մակարդակից նախադասության կամ պարբերության մակարդակի, կտեսնենք, որ այն կաղապարները շատ հաճախ նաև լրացնում են միմյանց՝ Այսպես, օրինակ նախորդ նախադասության մեջ արված խտացմանը հաջորդում է մյուս նախադասության ընդլայնումը (1–ի սղված բառը վերականգնվում է 2-ում):

Այս առիթով Տիխո Մոնգենն ասել է, որ ավելի լավ է բաց թողնել այն մանրուքը, որը չի թարգմանվում, քան թույլ տալ բառափոխում (paraphrase): Ոչ միշտ է հնարավոր թարգմանել մի տունը մյուսի հետևից, բայց այդ շեղումից հետո հարկ է անմիջապես քայլ առ քայլ հետևել հեղինակին (1, էջ 23): Այստեղից կարելի է հետևություն անել, որ ոչ մի բացթողում չպետք է անհայտ կորչի, այլ հարկավոր է այդ բացը հետագայում որևէ կերպ վարականգնել կամ լրացնել:

Շարունակելով դիտարկումները նախադասության և պարբերության մեջ հանգում ենք այն մտքին, որ փոխակերպական կաղապարները պետք է դիտարկել միասնական և որոշակի ընդարձակ համատեքստում, քանի որ դրանք լրացնում են միմյանց: Այսպես զուտ թվաբանական հաշվարկով ընդլայնման պատճառը և նպատակը կարող է լինել ընդհանուր խտացումը: Այլ կերպ ասած բավական ընդարձակ մեկ նախադասությունը կարող է տրոհվել երկու համառոտ նախադասությունների, որոնք ավելի կխտացնեն թարգմանվող միտքը, քան բնագրի տվյալ նախադասության նույնպիսի ընդարձակ թարգմանությունը (իսկ նախադասությունների քանակը կշատանա): Եվ փորձը ցույց է տալիս, որ ցանկացած թարգմանություն գերազանցում է բնագրին: Դանդիպում են նաև պարբերության խտացման երկու նախադասությունը մեկի վերածելու դեպքեր:

Ուստի կարելի է ասել, որ տեքստից դուրս առանձին օրինակների դիտարկումները չեն կարող լիարժեք լինել: Գործնականում խնդիրը ավելի խորը և սպառնիչ պատկերացնելու համար անհրաժեշտ է այդ կաղապարները դիտարկել որոշակի իրադրություններում, ինչպես նաև հաշվի առնել ընդհանուրի և մասնավորի հարաբերությունները (բառ-նախադասություն, նախադասություն- միտք, միտք և տեքստ), որի արդյունքում կարելի է ստանալ մեկ միասնական պատկեր: Այս ամենը հնարավոր է իրականացնել միայն փոխակերպական կաղապարների տեսական ավելի խորը ուսումնասիրության արդյունքում: Վերջինս իր հերթին կօգնի այդ կաղապարների ավելի հստակ և որոշակի դասակարգումներ տալ և նույնիսկ գտնել դրանց ավելի սեղմ ենթախմբերը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Алексеев М.П., Проблема художественного перевода, Иркут, 1931.
2. Бархударов Л.С., Основы общей теории перевода, М., 1975.
3. Копанев П.И., Вопросы истории и теории художественного перевода, Мн., Изд-во БГУ, 1972.
4. Копанев П.И., Беер Ф., Теория и практика письменного перевода, часть 1, Минск, Высшая школа, 1986.
5. Львовская Э.Д., Теоретические проблемы перевода, М., 1985.
6. Швейцер А.Д., Перевод и Лингвистика, М., Воениздат, 1973.
7. Феодоров А.В., Основы общей теории перевода, М., 1968.
8. Nida E. Taber Ch. The Theory and Practice of Translation, United Bible Societies 1969., v: VIII

*Օ. Օգոնեսյան*

### ПРОБЛЕМЫ ОПРЕДЕЛЕНИЯ И КЛАССИФИКАЦИИ ТРАНСФОРМАЦИОННЫХ МОДЕЛЕЙ

В настоящей статье обсуждаются основные причины трансформации в процессе перевода и что писали по этому поводу античные мыслители. В работе представляются те модели которые были развиты и классифицированы до сих пор. И наконец в статье представлены те сферы которые нуждаются в более четкой и глобокой изучении.

*Օ. Hovhannisyan*

### PROBLEMS OF DEFINITION AND CLASSIFICATION OF TRANSFORMATIONAL MODEL

In the present article we aim to discuss the main reasons for transformations in the process of translation. It is also mentionaed what the ideas of the ancient great thinkers were on this matter and what models have been developed and classified so far. Finally it indicates what are the lacks in this sphere and what is needed to fill these lacks.